

# Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

Թիֆլիսի տնտեսական գազեր:

Հրատարակվում է շաբաթը մէկ անգամ կէս թերթ, կիրակի օրերով: 10 ամսվայ գինը Մարտից մինչև Յունիսը քաղաքում 2 ման. 50 կոպ., դուրսը՝ 3 ման. թ:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԹԵՐԹ

(ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ)

Գազեթին ստորագրվել կարելի է խմբագրողի մոտ:  
Գազեթում չհրատարակվող կլնողունվին մասնաւոր յայտարարութիւններ: Գների մասին կարելի է խմանալ խմբագրատանը:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ:

Տէրութեան կարգադրութիւնները: Տարեր և ուրիշ յայտարարութիւններ: Առհասարակ գրականութեան նշանակութիւնը և մ ր գրականութիւնը 1865 թին: Չանաղան Տեղեկութիւններ: Առևտրական տեղեկութիւններ: Մասնաւոր յայտարարութիւններ:

## ԽՄԲԱԴՐԱՏԱՆԻՑ:

«Առճառականի» խմբագրութիւնը յայտնում է, որ էս տարի յուլիսի 1-ից սկսած, քացի 10 ամսով ստորագրվելը, ընդունում է նմանապէս և 6 ամսով ստորագրութիւն մինչև դեկտեմբերի վերջը: Էդ վեց ամսի համար գինը նշանակվում է Թիֆլիսում 1 մ. 50 կ. իսկ քաղաքից դուրսը՝ 2 մ.

Դեռ էլի շարունակվում է «Առճառականի» համար ստորագրութիւնը առաջին Աճ-ից էս գազեթի ճակատումը յայտնած պնեքով:

## ՏԵՐԹԵՆԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Ֆինանսների միւնիստրի կողմից գաղտնիութիւնը: Բարձրագոյն հրամանով Ֆինանսների միւնիստրը հրատարակեց թէ ինչ պնեքով գրաւ կընդունվին էս տարի յուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի վերջը մաքսասնութիւնը զանազան բանկի տոմսակները օտարապէս ապրանքներից համեմու մաքսի համար: Ահա էն գներից մէկ քանիսը:

6% բանկի անանուն տոմսակը կընդունվի . . . . . 457 մ.

5% առաջին թաղաւորական փոխառութիւնները . . . . . 75 մ.

5% լատարեցով առաջի ներքին փոխառութիւնները . . . . . 100 մ.

5% լատարեցով երկրորդ ներքին փոխառութիւնները . . . . . 95 մ.

1865 թւի հոկտեմբերի 11-ի դատաստանական կանոնները Այովկասի կողմերումը: Բարձրագոյն հատառված 1865 թւի հոկտեմբերի 11-ի դատաստանական տեղերի հետ կերպով դործակատարութեան կանոնները ամբողջապէս դործ կընվին համապէս Այովկասեան փոխարքայութեանումը էս հետեւեալ փոփոխութիւններով:

1.) Այովկասեան փոխարքայութեանումը էս քաղաքներումը և նահանգներումը, որտեղ 1865 թւի հոկտեմբերի 11-ի կանոնների 5-դ յօդուածումը նշանակված պաշտօնաւոր մարդիկ չեն կարգված, էն տեղերումը պրոկուրորի տեղը պէտք է բռնէ Էնտելի պօլիցիայի ղեկաւորը, քաղաքապետի տեղը պէտք է բռնէ պօլիցիայումը գտնված քաղաքացի պատգամաւորը, բերդի կամրատի կամ նրա բաժանման ղեկակտորի տեղը պէտք է բռնեն պօլիցիայի կարգադրութեանով երկու մարդ հաստատ տեղացի բնակիչները:

2.) 1865 թւի հոկտեմբերի 11-ի կանոնների 24-դ և 222-դ յօդուածներումը յիշված ժամանակամիջոցը, որ նշանակված է դատաստանական տեղերին արքունական կառավարութիւնների վճիռների մասին տեղեկութիւններ հասցնելու համար, Այովկասեան երկրումը նշանակվում է քրէական դործերի համար — երկու ամիս, իսկ քաղաքական դործերի համար ութն ամիս:

3.) Այովկասեան երկրի նահանգապետները (УЕЗДНЫЙ НАЧАЛЬНИКЪ) ունեցած իշխանութիւնը անհրաժեշտ պարտաթղթերով պահանջմունքներ անելու մասին կինայ մի և նոյնը,

որ նշանակված է Այովկասեան երկրի կառավարութեան կանոնի մէջ (օրէնքների 2-դ հատորի և երկրորդ մասի 312,497 և 518 յօդուածներումը և 10-դ հատորի երկրորդ մասի 1,457 յօդուածումը):

4.) Գանդատների և պահանջողական դատարաններին և միւս դրա հաւատար 1-ին կարգի դատարաններին, նմանապէս դատաստանական պալատներին և սրանց հաւատար դատաստանական տեղերին էն կարգով, ինչպէս մինչև հիմի արդէն հրատարակված կանոնների հիման վրայ:

5.) 1865 թւի հոկտեմբերի 11-ի կանոնի 82-դ յօդուածումը նշանակված 1 ամսվայ ժամանակամիջոցի տեղ, կինայ Այովկասեան երկրի համար 10-դ հատորի 2-դ մասի 1,481 և 1,510 յօդուածների դօրութիւնը, այս ինքն երկու շաբաթ ժամանակամիջոց, կրկնակի հաշվելով ճանապարհ անցկենալու ժամանակը:

6.) 1865 թւի հոկտեմբերի 11-ի կանոնի 111-դ յօդուածի մէջ նշանակված ժամանակամիջոցի փոխանակ, Այովկասեան երկրումը երբ որ դատաստանատուն ուրիշ քաղաքից մասնաւոր դանդաղ է ուղարկվում, պէտք է դրա ստանալու օրը հաշվել էն ժամանակից, երբ օտար քաղաքացին դանդաղ փոստան է գցել:

7.) 1865 թւի հոկտեմբերի 11-ի կանոնի 34, 36, 37, 39, 40, 42, 45, 47 և 48-դ յօդուածները միատեսակ կներդործեն ինչպէս դատաստանական պալատներումը, նմանապէս և դաւառական և օրլաստի դատարաններումը (судбеник и областной суд):

8.) Այովկասեան փոխարքային իրաւունք է տրվում իր փոխարքայութեանումը գտնված բոլոր դատաստանական տեղերումը դործակատարութեան: ձևերը փոխելու, եթէ էդ փո-

փոխադրվածները փորձով հարկաւոր համար-  
վին և մի և նոյն ժամանակը ընդդէմ չլինին  
1864 թվի նոյեմբերի 20-ի, 1865 թվի հոկ-  
տեմբերի 11-ի և էս կանոններին:

**Իւտալիցիայի մինիստրի կար-  
գադրութիւնը:** Բարձրագոյն հրամանով  
Իւտալիցիայի մինիստրը յունիսի 30-ին յայտ-  
նեց, որ թագաւորական խորհրդարանի (ro-  
сyдapствeнный coвeтъ) հրատարակած 1865  
թվի հոկտեմբերի 11-ի բարձրագոյն հաւ-  
տատուած կանոնները 95-դ յօդուածը, որով  
թոյլ է տրւած առհասարակ ամէն օտար մարդ-  
կանց ըսել գործերի քննութիւնը դատաւ-  
տանատներումը, կվերաբերվի նմանապէս և  
առևտրական դատարաններին (կոմերչեսկի  
սуды):

**Թիֆլիսի կլասիկական դիմնա-  
դիպի մասին:** Նորին կայսերական Բարձ-  
րութիւն, կովկասեան փոխարքայի միջնոր-  
դութենով բարձրագոյն հրամանով էս տա-  
րի յունիսի 10-ին Թիֆլիսի դաւառական  
դիմնադիան փոխվեցաւ կլասիկական դիմ-  
նադիայ, որտեղ հին ընդունելից պէտք է սոր-  
վեցնեն միայն լատիներէնը:

**Բաքուի ուսումնարանի մասին:**  
Էս տարվայ յունիսի 10-ին բարձրագոյն կար-  
գադրութենով Բաքուի 4 դասատուներից բազ-  
կացած բարձր ուսումնարանը փոխվեցաւ  
Բեալեան պրօգրիմնադիպ:

## ՏՈՐԳԵՐ ԵՒ ՈՒՐԻՇ

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Թիֆլիսի քաղաքական կառավարութիւնու-  
մը էս տարի օգոստոսի 1-ին նշանակված է  
քաղաքական բերդի, Մեակիսի բերդի, դա-  
րաւոլխաների և կոմնդանտի տան համար  
217 սաթէն և 1 արշին փէս հասցնելու  
տորդը:

Գէօրգիևսկիի ղինտորական հիւանդանոցի  
կանտարացումը օգոստոսի 16-ին նշանակված  
է հիւանդանոցի համար զանազան փէտեղէն-  
ներ չինելու և ներկելու տորդը:

Թիֆլիսի դաւառական կառավարութիւ-  
նումը սեպտեմբերի 24-ին նշանակված է  
Թիֆլիսի քաղաքացի Սորման խեչանեանցի  
Թիֆլիսի 1 մասումը և 3 կվարտալումը դը-  
նակած 3000 մ. ղին դրած 5 դուքանների  
ծախելու տորդը:

ԱՌՀԱՍԱՐԱԿ ԳՐԱԿԱՆՈՒԹԵՆԻ ՆՇԱՆԱ-  
ԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՄԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ  
1865 թիւին:

5 \*

Ազգութիւնն էլ էնպիսի իրաւունք է, ինչ-  
պէս և մարդկութենի իրաւունքը: Էս հիման  
վրայ ազգութիւնի և ընդհանուր մարդկութե-  
նի խնդիրները միատեսակ կեանքի խնդիր-  
ներ լինելով, անշուշտ ազգի մտածող մարդ-  
կանց և նրանց գործիքների առարկայ պէտք  
է դարձած լինին: Ամէն ազգ ունէ իր ա-  
ռանձին կեանքը, իր առանձին անցեալը,  
ներկան և ապագան, որ դուրս է բոլորովին  
տարբեր է, քան միւս ազգերինը, բայց մի և  
նոյն ժամանակը էդ ազգը դարձեալ ազգում  
է ընդհանուր մարդկութենի կեանքով և ու-  
րեմն մասնակից է մարդկութենի բոլոր բա-  
րելաւորութենին: Էստեղից ծագում է էն եզ-  
րակացութիւնը, որ ընդհանուր մարդկութե-  
նի խնդիրները նոյն օրինակ ուշադրութենի  
և քննութենի արժանի են, ինչքան էլ ազ-  
գութիւնների սեպհական խնդիրները: Գը-  
րականութիւնը, որ ազգերի մտաւոր դրժու-  
նեցութենի կշիռն է, ի հարկէ աչքի առաջն  
ունէ թէ ընդհանուր մարդկային ազգը և թէ  
մասնաւոր ազգութիւնները: Գրականու-  
թիւնը մի և նոյն ժամանակը միատեսակ պա-  
րապած է թէ առաջինին վերաբերած ահա-  
զին խնդիրները մշակելով և թէ երկրորդի  
օգուտը պահպանելով: Մէկը միւսից ան-  
բաժան պէտք է լինի գրականութենի հա-  
մար: Մոռանալ ընդհանուրը, ամբողջ մարդ-  
կութիւնը և պարապիլ մասնաւոր ազգի մի-  
միայն աղղային խնդիրներով, մեր կարծիքով  
նոյն տեսակ յանցանք է ոչ միայն գրակա-  
նութենի, այլ և մասնաւոր անձների, ան-  
հատների համար, որքան և աններկի է կօս-  
մալօլիտ \*\* լինիլ, որաւայիլ ընդհանուր  
մարդկութենի խնդիրներով, մի և նոյն ժա-  
մանակը բարձի թողի արած իր մայրենի  
ազգը, որից ծագումն ունէ և ինքը: Էդ-  
պէս ահա շատ աննշան, թերի և մէկ մա-  
սով էլ ծուռն ու սխալ ուղղութենի տէր կլի-  
նի էն գրականութիւնը, որ վերոյիշեալ եր-

\* Էս յօդուածի 1-ին և 2-դ կտորները  
տարված են «Վաճառականի» 10 և 11 նու-  
մրներումը:

\*\* Կօմալօլիտ—էն մարդը, որ հայրենիք չէ  
ճանաչում, բայց որի համար հայրենիքը տիե-  
զերքն է ընդհանրապէս:

կու միմեանցից կախումն ունեցող խնդիր-  
ներից միմիայն մէկովը լինի պարապած և  
միակողմանի ընթացք, հայեցածք, կար-  
ծիք և ուղղութիւն ունենայ:

Հայտնի նոր ծագող գրականութենի համար էլ  
շատ թանկ պէտք է լինին ոչ միայն մեղ հայե-  
րիս ուղղակի վերաբերած ազգային կեանքի  
խնդիրները, այլ և էն բոլորը, որ վերաբերվում  
են ընդհանուր մարդկութենի բարելաւութե-  
նին և նրա դարերաւոր փորձերի և քրտնքի  
պտուղներ են: Նրանի էն ազգին, որի գրա-  
կանութիւնը չէ թէ յետ չի մնալ ընդհանուր  
մարդկութենի ընթացքից և յառաջադիմու-  
թենից, այլ և ինքը իր կողմից օգուտ քաղելով  
ուրիշների կեանքի փորձերից, փոխարինարար  
կառաջարկէ ուրիշ ազգերին իր սեպհական  
մտաւոր կեանքի պատմութենի պտուղները:  
Էդ նախանձելի գերը ի հարկէ պատկանում  
է դեռ ևս Ներսիսայի այժմեան առաջնակարգ  
ազգերին և նրանց գրականութենի միջոցնե-  
րին: Ովոր փոքր ի շատէ ծանօթ է Ներսի-  
սայեցոյ գրականութիւններին, նա շուտ կա-  
րող է միտը բերել էն երեւելի նշանաւոր խնդ-  
իրները, որոնց մշակելու և վճռելու համար  
իր ձիւղ թափած ունէ, օրինակ հենց Անգ-  
լիացոյ գրականութիւնը և ազգը, և որոնք  
մի և նոյն տեսակ նշանակութիւն ունին ոչ  
միայն Անգլիայի, այլ և ուրիշ ազգերի և մինչև  
անգամ նոյն իսկ չինացոյց համար: Ներսի-  
սայն էս բոլորի առաջարկում է ամբողջ  
մարդկութենին իր էն բոլոր մտաւոր դան-  
ձը—լուսաւորութիւնը, որ նա դուրս է ա-  
ռանձին և առանց մեր մասնակցութենի  
պատրաստել է մինչև էսօր: Յայտնի է, որ  
ընդհանուր մարդկութենի առաջ քաշելով  
Ներսիսայի մտաւոր դրժունեցութիւնը չէ թէ  
չէ դադարում, այլ և օրէցօր ղիմում է առաջ:  
Էն ազգերը, որոնք արդէն սկսել են Ներսի-  
սայի հետ միասին ապրել և մի և նոյն օ-  
ղից ծծել, անշուշտ զբաղված պէտք է լի-  
նին լուսաւորութենի նոյն հարցերի վրձ-  
ուելով, որոնց վճիռ տալու վրայ պարապած  
է Ներսիսայն. կամենում ենք ասել, թէ էն ազ-  
գերը, որոնք միտք ունին իրանց դարերաւոր  
մտաւոր մեղեւորութենից և անգործունեութե-  
նի փորձանքներից ազատվիլ և որոնք արդէն  
որոշել են և վճռել են յետ չմնալ այժմեան  
լուսաւոր ազգերից և կամ համարել էդ լուսա-  
ւորութենին, պէտք է Ներսիսայեցոյ նման աչ-  
քի առաջ ունենան լուսաւորութիւնը:

Էդ բանի համար հարկաւոր է ուշա-  
դրութիւն դարձնել զլուսաւորապէս գրակա-  
նութենի միջոցներին կամ գործիքներին,  
որոնք ի հարկէ պարբերական հանդէսներն

են: Պարբերական հանդէսները, ժուրնալները և դպրականները նման են էն լատիներին, որոնք լուսաւորում են գիշերով գնացող մարդուն և նրան ճանապարհ են ցոյց տալիս: Ճանապարհ ցոյց տալով ճրագ լինելու համար ժուրնալը կամ դպրականը չէ թէ միայն հարկաւոր է, որ աւելի բարձր հանդիսանայ մտածողութենի ասպարեղումը էն ժողովուրդից, էն ազգից, որի համար տարւում է, այլ և դոնէ պէտք է յետ չլինի մնացած իր մթաւածողութենի խաղաղութեամբ իր կարգացողներէ: Աւ վերջապէս ինչ նշանակութիւն կարող է ունենալ էն պարբերական թերթը, ինչ դարձ կարող է կատարել դա, քանի որ ինքը, օրինակ, աւելի յետադէմ է, քան թէ իր ընտրած ժողովուրդը: Մեր հայերէն նոր սկսող դրականութենի մէջ արդէն մինչև էսօր էլ աւանդում ենք էդ բանի հաստատող փաստեր: Վերջիցս մեր ասածներն առիթ տալուն էլ էդ փաստերն են: Մեր մինչև էսօր լոյս ընծայող բոլոր պարբերական թերթերը միշտ առանձին կերպով էջեր են ունեցել բացարձակ և պարտապէս են իր թէ էն խնդիրներով, որոնցից կախւած է մեր ապագայ ճշմարիտ լուսաւորութիւնը և հարստութիւնը: Բայց էդ պարբերական հանդէսներէ մէկ քանիսն մտածողութենի ասպարեղը էնքան նեղ է էլել և լակ, որ դրանք չէ թէ ժողովուրդին լուսաւորող և նրան էս կամ էն կողմը ճանապարհ ցոյց տալով լատիներին են էլած, այլ էն յետամնացութենի առիթն են դառնում, որով, եթէ միայն կարելի լինէր ժողովուրդների յետադիմութիւնը, մենք կարճ միջոցում Շահաբասի ժամանակներին պէտք է վերադառնայինք: Տարաբաղաբար ունինք էդպիսի պարբերական հանդէսներ:

Բայց ժողովուրդի կեանքը չէ առանց իր կանաններին: Ասորով, կեանք ունեցող ժողովուրդին էդպիսի պարբերական թերթերը վրնաս չեն կարող տալ: Եղպէս էլ եթէ մենք արդէն չարժեք ենք թմբակներից դէպի ճշմարիտ լուսաւորութիւնը և յետադէմ ժուրնալներ և դպրականներ ազդեցութիւնը շատ քիչ կարող է արգելել մեր ընթացքին: Թէպէտ ինչպէս վերին էլ ասայինք, մեր բոլոր պարբերական հանդէսները իրանց թերթերումը տեղ ունէին բաց արած ճշմարիտ լուսաւորութենի համար, բայց դրանցից մեծ մասը իրանց մէկ քանի տարւայ ընթացքի մէջ գիշեր ցերեկ հայոց հասարակական կեանքի վրայ խօսելով դարձեալ ոչինչ մէկ կենդանի խօսք չառաջին: Ժողովուրդի վրայ ներդրածը, նրա հոգին չարժող, թէ և ամենաթիւն, բայց ազգու մի-

ջոյքը—դրականութենի մէջ անշուշտ բանաստեղծութիւնն է: Միւս կողմից՝ ժողովուրդը իր կատարելագործութենի որ հասակումն էլ որ կուզէ լինի, բայց դրա թէ խօսելու և թէ մտածելու սիրած ձևը միշտ էլ էլ է բանաստեղծութիւնը, մանաւանդ որ որքան էլ ժողովուրդը իր մանկութենի հասակումն է, էնքան աւելի մեծ է նրա սէրը բանաստեղծօրէն խօսելու և մտածելու: Եղպէս ահա մեր ժողովուրդի իր մանկական և դեռ էլի խաղ հասակումը շատ բնական կլինէր, մեր նոր սկսող դրականութիւնը բոլոր բանաստեղծութենի ձևով երեւէր, բայց էդ բանը չէ նկատում դեռ ես: Մեր մինչև էսօր հանդէս դուրս եկած բոլոր հեղինակների մէջ դեռ ես չկայ մէկ պայծառ երևոյթ, մէկ բանաստեղծ, որ կարողանար ժողովել, կարել պիտի չաղկալով և մէկ ազգու ընթացք տալ ամեն կողմ վաղող և առանց որ և իցէ ուղղութենի տէր գրիչներին. չկայ մեր մէջը դեռ ես էնպիսի մէկ հեղինակ, որի անունը ժողովուրդին մէջ չընթալ լինի, որի գրականները ժողովուրդը բերան լինի առած, որը որ ժողովուրդի սրտիցը լինէր խօսած: Խօսք չըկայ, որ պահանջի մէկ էդպիսի արժանաւորութիւն որ և իցէ հեղինակից ոչ միայն աւելորդ կլինէր, այլ և ծիծաղալի, որովհետեւ ապագադարար մեր մէջ դեռ ես կատարում է լատիներէն առածը, թէ «պօժեանքը չեն դառնում, այլ ծնում են»:

Մեր նոր հեղինակների մէջ դուրս միայն երկուսն են դեռ ես, որ փոքր ի շատե իրաւացի կերպով արժանաւորութիւն են դրած մեր մէջ առհասարակ՝ էդ է հանդուցեալ խաչատուր Աբովեանը և պէմբլծում Գամար—Քաթիլայ անուանեալ հեղինակը: Մի և նոյն ժամանակը աւելորդ չենք համարում ասել, որ էդ երկու բանաստեղծների արժանաւորութիւններն էլ ճշգրտութեամբ խիստ քրննութենի տակը չեն ընկած և որոշած, որովհետեւ մեր մէջը դրականութենի չլինելու պատճառով կրիտիկայ ասած բանն էլ չկայ: Եղպէս ահա դեռ ես ժամանակեւոր փառքի և պատուի հատած վերջիցս երկու հեղինակներն են: Գրանցից Աբովեանը, ինչպէս անցեալ անդամներին էլ ասայինք, մեր նոր սկսող դրականութենի ծնողը և հիմնադիրն էր. երկրորդը որ Գամար—Քաթիլայան, իբրեւ ժամանակակից հեղինակ, ունէ կենդանի խօսք և մտածողութիւն, ունէ հայոց ուսածը, ոյժ և կրակ խօսքի մէջ և մեզ հետ ապրող հեղինակներից մէկն է: Արկաւար միայն անշուշտ պէտք է էն կրիտիկայի առաջին նիւթերը լինին, որ ի հարկէ քաղաղա-

դայումը մեր դրականութենի առաջ գնացած ժամանակը պէտք է ծնվի և լինի: Մենք մեջ վրայ չենք յանդգնում վեր ագնել էդ հեղինակներին քննութենի պաշտօնը կատարելապէս, բայց մի և նոյն ժամանակը պարտաւոր ենք համարում մեզ առաջ բերել էստեղ մեր կարծիքը դրանցից թէ մէկի և թէ միւսի վրայ էնքան, որքան որ հարկաւոր է մեր նոր սկսող դրականութենի էս մեր տեսութենի ամբողջութենի համար:

Ա. Ե.

# ՉԱՆԱԶԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

**Անգլիայի պոլիցիականի կատարած դործը:** Բնիսմայն Ուիլկինս անունով Անգլիայի Վորչեստրի բանկի դանձապետը էս մօտիկ ժամանակներում փախաւ Ամերիկայ, իր հետ տանելով բանկից 1 միլիոն ֆունտ ստերլինգ: Նրա յետևից ուղարկեցաւ պոլիցիական, որն որ Վիվերտուից դուրս գնաց էս տարի մարտի 21-ին: Հասաւ սա Նիւեօրք ապրիլի 2-ին, դուռը դողին ապրիլի 3-ին և ապրիլի 4-ին իր հետ բերեց Անգլիայ գողին: Հասան արխանք Լիվերպուլ ապրիլի 14-ին: Ընդամենը երեք շաբաթվայ մէջը սկսվեցաւ և վերջացաւ էդ բանը Անգլիայի և Ամերիկայի պէս միմեանցից հեռու դանդաղ երկիրներում:

**Անգոյրը (կարմրագետը) և սպիտակագետը:** Թէ կարմրագետն ու սպիտակագետն ինչքան տեղը վնաս են առհասարակ ազգիկայ երկսին էդ ամենքին յայտնի է: Մանաւանդ սպիտակագետը, որ մատանի է և թունաւոր: Թէպէտ դորդ է էդուրով ազգիկանց երեսը գեղեցկացնում է, բայց շուտ էլ կոչապնում է նրանց երեսը և կոպիտացնում: Բայց ի էդ, որ սպիտակագետը քաղցեցին է վնաս սնդոյրն ու սպիտակագետը, որիչ բաներ էլ են պատահում: Օրինակ մէկ տեղ, մէկ դերդաստանի մէջ առաջ որդիքը շատ առաջ էին, յետոյ նոր ծծմէր բռնած փամանակը նրանք սկսեցին լղարիկ հիւանդանալ: Բժշկների բոլոր աշխատանքը ի դուր էր անցկենում, չէին կարողանում դաւել դուրս լմանալ: Ծնողները իրանց կացած տունը փոխեցին էս մտքով, որ կարելի է թէ տունն է նրանց հիւանդութենի պատճառը: Փոխեցին նրանք իրանց հայ ծախողին, միա ծախողին, բոլորին: Վերջը քրքրեցին ծծմէրի սննակը և դտան շատ սպիտակագետ և կարմրագետ: Բանիցը դուրս եկաւ, որ էդ ծծմէրը սատիկ քսվում է էլել և իր պարանի որդիքը,

նորան համարելով, ամեն օր քիչ քիչ կերել էին և թոյնը, որ դոմարում էր սպիտակագլուղի մէջը:

**Նոր Նախիջևանի բարեգործական ընկերութիւնը:** Էս տարի յունիսի 12-ին Նոր Նախիջևանի հայերը բարեգործական ընկերութիւն են կազմել և հետեւալ նպատակներով ա. օգնութիւն հասցնել Նախիջևանի հասարակութեան չքաւոր դերդաստաններին, բ. հողալ չքաւոր ծնողներին զաւակներին զրազրաւութիւն ստրկեցնել, կարգել նրանց զանազան դպրոցներումը՝ ընդհանուր ուսում տալու, կամ վաճառականութիւն և արհեստներ սորվեցնելու և գ. քանի էլ կարելի է առաջ տանել ամեն տեսակ օգտակար ձեռնարկութիւններ, որոնց նպատակն է Նախիջևանի հայոց կեցութեան բաւարարելը և նրանց մէջ լուսաւորութեան տարածելը:

Ընկերութիւնը ունի բարեգործների ընծայած 4000 մ., որ համարվում է զրահամար զրաւադրւալ էդ զումարին կաւելանան ընկերութեան անդամների հասուցանելու նըշանակված փողը և անդամների ու օտար անձների ընծայաբերութիւնները:

Ընկերութեան անդամների թիւը անորոշ է: Անդամ դառնալու համար ցանկացողը կամ ամեն տարի 5 մանէթ պէտք է վճարէ ընկերութեան և կամ մէկ անգամով պէտք է ընծայէ ընկերութեան 100 մանէթ կամ աւելի դումար: Ընկերութեան գործերի կառավարելու համար 24 հոգաբարձուներից խորհուրդ է կազմվում: Հոգաբարձուները 2 տարով են ընտրվում ընկերութեան անդամներից, որոնցից մէկը նշանակվում է նախագահ, մէկը գանձապետ և 4 գործակատար:

**Խօսերայի մասին:** Պետերբուրգումը յուլիսի 7-ին հիւանդացաւ խօսերայով 303, մեռաւ 90, յուլիսի 8-ին հիւանդացաւ 423, մեռաւ 166, յուլիսի 9-ին հիւանդացաւ 228, մեռաւ 125, յուլիսի 10-ին հիւանդացաւ 278, մեռաւ 78, յուլիսի 11-ին հիւանդացաւ 364, մեռաւ 110, յուլիսի 12-ին հիւանդացաւ 370, մեռաւ 82: Ընդամենը խօսերայի սկզբից մինչև յուլիսի 12-ը էդտեղ հիւանդացել են 5,778, առողջացել են 1,702 և մեռել են 1,851:

Կրոնչտանդումը մինչև յուլիսի 8-ը խօսերայով հիւանդ է ելել 163 մարդ: Յուլիսի 8-ին էլի հիւանդացել են 35, առողջացել են 22:

Խարկովումը յունիսի 29-ին 3 մարդ է մեռել խօսերայով:

Բեսարաբիայումը յունիսի 22-ից մինչև 30-ը 293 մարդ է հիւանդացել խօսերայով, որոնցից 84 մեռել է:

Կիեւումը յուլիսի 1-ից մինչև 2-ը խօսերայով հիւանդացել են 88, մեռել են 25: Յուլիսի 2-ից մինչև 3-ը հիւանդացել են 57, մեռել են 14:

Օդեսայումը յուլիսի 10-ին հիւանդացել են խօսերայով 21, մեռել են 14: Յուլիսի 11-ին հիւանդացել են 5, մեռել է 1: Յուլիսի 12-ին հիւանդացել են 55, մեռել են 15:

Խերսոնի գաւառումը յունիսի 27-ից մինչև յուլիսի 4-ը հիւանդացել են խօսերայով 718, մեռել են 187:

Քիշինեւումը յունիսի 23-ից մինչև յունիսի 30-ը հիւանդացել են խօսերայով 13, մեռել են 6:

Պոդոլսկի գաւառումը յունիսի սկզբից մինչև 20-ը հիւանդացան խօսերայով 23, մեռան 9:

Վոլինի գաւառումը կան մէկ քանի խօսերով հիւանդներ:

Ֆինլանդիայի Աբօ քաղաքումը մէկ քանի մարդ հիւանդացել է խօսերայով:

**Պետերբուրգի տեղեկրաֆը:** Էս տարի մայիսի 22-ին Պետերբուրգումը քաղաքի տեղեկրաֆ սարգվեցաւ: Էդ տեղեկրաֆը հասցնում է թէ կառավարչական և թէ մամուաւոր դեպքաներ քաղաքի մէջը:

**Մոսկովի առևտրական բանկը:** Մոսկովումը անցեալ յունիսի 15-ին սարգվել է առևտրական բանկ: Դրա հիմնական գումարն է 1,260,000 մանէթ դոլ և, որն որ ժամանակով էդ բանկի կանոնների հիման վրայ կարող է հասնել 5 միլիօնին:

**200,000 մանէթի տանողը:** Պետերբուրգի զաւթներումը գրում են, որ էս յուլիսի 1-ին 5% առաջին փոխառութեան լատարեյումը 200,000 մանէթը ընկել է դեյսովիանին ստատսկի սովեանիկ Զինովևիկին:

ԱՌԵԻՏԻԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Վախերայուլ յուլիսի 13

Էսօր ծախվեցաւ 15 000 հակ բամբակ. դները չեն փոխված:

Լօնդոն յուլիսի 12

Կուրսը Պետերբուրգի վրայ 28 պէնս 1 մանէթին:

Օդեսա յուլիսի 18.

Կուրսը Մարսելի վրայ 295 սանտիմ:

Պետերբուրգ յուլիսի 13.

Կուրսը Լօնդոնի վրայ 29 պէնս:

Պարիսի վրայ 301 սանտիմ:

5% Լատարեյով առաջին փոխառութեանի տոմսակների դները բարձրացան 109 3/4 մանէթից մինչև 110 մ:

5% Լատարեյով երկրորդ փոխառութեանի տոմսակների դները բարձրացան մինչև 106 1/2 մ:

Ռսկին 6 մ 75 կ:

Քիշինա յուլիսի 30

**Քիշինի Թագաւորական բանկի բաժանումը** իր ստացած 500 հաւ 5% Լատարեյով երկրորդ փոխառութեանի տոմսակները էս մէկ շաբաթ առաջ բողորը ծախել է և առժամանակ չկայ ծախու: Բանկը ընդունում է 5% Լատարեյով առաջին և երկրորդ փոխառութեանի առաջինները մամուաւոր մարդկանցից իբրեւ գրաւ, 100-ին 7% առնելով իրան օգուտ հետեւեալ կուրսերով՝ առաջին փոխառութեանը 110 մ., երկրորդինը—107 մ.: Բարաթ է անում Մոսկով, Օդեսա, Մալարիա և Ռուսաստանի մեւս քաղաքները՝ 200—1,000 մ. 1/4% առնելով, 1,001—30,000 մ. 1/5% առնելով, 30,001-ից բարձր—1/10%:

**Բամբակի առևտուր չկայ:**  
Բրդի մագանդէքը մի և նոյնն են:  
Ինդիգո շաբարը 9 մ. 60 կ.  
Ռսկին 10 մ 80 կ.  
Արծաթը 72 սլոբի 85 մ.  
— 84 սլոբի 300 մ.  
Ռսկին 6 մ 95 կ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ:

Ճանապարհորդակից են ուղււմ ունենալ հատեղից մինչև Մոսկով գնալու: Էսօր մասին ցանկացողը կարող է հարկաւոր տեղեկութիւնները ստանալ «Վաճառականի» խմբագրատանը: